

«Հայաստան ծառատունկ ծրագիր» («էյ-Թի-Փի») բարեգործական Հիմնադրամի տնամերձ տնկարանների փոքր ձեռներեցության ծրագիրը կայուն Ձարգացման «էներջի Գլոբ» մրցանակաբաշխության կողմից ճանաչվել է ազգային հաղթող:

Բրյուսելյան Եվրախորհրդարանում Քոֆի Անանը և Միխայիլ Գորբաչյովը ուղերձ են հղում երեկոյան գալա- ծրագրին:

Բելգիա, Բրյուսել: «Հայաստան ծառատունկ ծրագիր» կազմակերպության (որի պաշտոնական անունն է «էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամ) փոքր ձեռներեցությանն ուղղված տնամերձ տնկարանների ծրագիրը «էներջի Գլոբ» մրցանակաբաշխության կողմից ընտրվել է ազգային հաղթող Հայաստանից: Վերջինս հայտնի է նաև «Կայուն զարգացման միջազգային մրցանակաբաշխություն» անունով: Մայիսի 26-ին «էյ-Թի-Փի»-ի ներկայացուցիչները այցելել էին Եվրախորհրդարան՝ մրցանակաբաշխության արարողությանը, որի ընթացքում 109 երկրների ներկայացրած 853 նախագծերից ընտրվել էր վերոհիշյալ ծրագիրը:

Հեռուստատեսությամբ հեռարձակվող երեկոյան գալան տեղի ունեցավ Եվրամիության Խորհրդարանի նիստերի դահլիճում: Երեկոյին ներկա էին ավելի քան 1000 հյուրեր: Պատվավոր «էներջի Գլոբ» մրցանակը հանձնվեց «Նոբելյան Խաղաղության մրցանակի» դափնեկիր Միխայիլ Գորբաչյովին: Եվրամիության Խորհրդարանի նախագահ Հանս- Գերտ Փոթթերինգը և Եվրամիության Հանձնաժողովի նախագահ Խոսե Մանուել Բարրոսոն մրցանակը պարոն Գորբաչյովին շնորհեցին «Կանաչ խաչ միջազգայինը» համահիմնադրելու գործում ունեցած իր առաջատար դերի համար:

«էներջի Գլոբի» կողմից ավելի վաղ հավանության արժանացած «էյ-Թի-Փի» բարեգործական Հիմնադրամի նորարարական Տնամերձ տնկարանների ծրագրի հիմնական նպատակն էր՝ կրճատել աղքատության հետևանք հանդիսացող անտառահատումների ծավալները: Այդ նպատակով կազմակերպությունը ստեղծել է տնկարանների փոքր ձեռնարկություններ հյուսիսային Հայաստանի Գետիկ գետի ավազանում: Հարյուրավոր սոցիալապես խիստ անապահով հայ ընտանիքներ ընդգրկվել են այս ծրագրում և այսօր տնամերձ տնկարանների տերեր են դարձել: Մասնակցելով ծրագրին՝ այս ընտանիքները կրկնապատկել են իրենց տարեկան եկամուտը:

«2004թ. «էյ-Թի-Փի»-ն սկսել է այս նախագիծը որպես պիլոտային ծրագիր 17 ընտանիքների հետ: Այդ ժամանակից ի վեր ծրագիրն ընդլայնվել է և այժմ ընդգրկում է 400 ընտանիքներ, որոնք տնկիներ են աճեցնում անտառվերականգման համար,- մրցանակաբաշխության արարողությունից հետո նշում է «Հայաստան ծառատունկ ծրագիր» Հիմնադրամի («էյ-Թի-Փի») Փոխտնօրեն Ջեյսոն Սողիկյանը:

«Միշտ էլ նպատակ ենք ունեցել հավելյալ եկամտի որոշ մասը ներդնել այս գյուղերում բնական գազի ենթակառուցվածքներ ստեղծելու ուղղությամբ, որպեսզի կրճատվի ջեռուցման և կենցաղային նպատակներով անտառահատումների քանակը: Մեր անձնակազմի և այս ծրագրի հիմնադիրների անունից հայտնում եմ, որ մեզ համար մեծ պատիվ էր «էներջի Գլոբի» կողմից Հայաստանի հեռավոր գյուղական վայրերում կայուն զարգացմանն ուղղված մեր ներդրման համար խրախուսանքի արժանանալը», - ավելացրեց Սողիկյանը:

Եվրախորհրդարանի ցերեկային ծրագրի ընթացքում դիտարկումներով Հանդես եկան Ուսաստանի նախկին նախագահ Միխայիլ Գորբաչովը և «Էներջի Գլոբ» մրցանակաբաշխության ժյուրիի նախագահ Մանեկա Գանդին: Ավելի քան 100 երկրների նորարարական և կայուն զարգացումը սատարող տարբեր նախագծեր մրցանակների արժանացան՝ Այլընտրանքային էներգիայի արտադրման ծրագրեր Բանգլադեշում, Վրաստանում, Քենիայում, Նիկարագուայում, Լեհաստանում և Շրի Լանկայում, ինչպես նաև անտառատունկի ծրագրեր Արգենտինայում և Չոնդուրասում:

««Էյ-Թի-Փի» - ն շատ հպարտ է այս հեղինակավոր մրցույթում ընտրվելու և Հաղթելու կապակցությամբ», - նշեց կազմակերպության Զարգացման ծրագրերի ղեկավար Փոլ Եդիայանը, որը նույնպես ներկա էր արարողությանը: «Վերջին տարիներին մեր նպատակն է եղել կազմակերպությունը հասցնել միջազգային համայնքային զարգացումների մակարդակին, այդպիսով ուրախ էինք այս ծրագրին մասնակցելու համար: Մինևույն ժամանակ երախտագիտություն ենք հայտնում մեր բազմաթիվ աջակիցներին, ում շնորհիվ «Էյ-Թի-Փի» - ն կարողացավ իրագործել Փոքր ձեռնարկատիրության այս կարևոր նախագիծը Գետիկ գետի ավազանում»:

«Էներջի Գլոբ» մրցանակաբաշխությունը հիմնել է Վոլֆգանգ Նյումանը 1999թ. Ավստրիայում: Նա «Էներջի Գլոբ» հիմնադրամի նախագահներից մեկն է եղել: Պարոն Նյումանը էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագրերով զբաղվում է արդեն 25 տարի շարունակ և մեծ փորձառություն է ձեռք բերել այդ ոլորտում:

Երեկոյան ծրագրի ընթացքում մրցանակների արժանացան նաև Պերուի աղբի վերամշակման ծրագիրը, Մոզամբիկում ջրհորների կառուցման նախագիծը, իսպանական այլընտրանքային էներգիայի գործարանը, որն արտանետումներից զերծ էներգիա է արտադրում, և երիտասարդների բնապահպանական տեղեկացվածության բարձրացման Հարցերով զբաղվող Հարավաֆրիկյան ծրագիրը: Գլխավոր Հաղթող է ճանաչվել Ավստրիայում տեղակայնված «Ֆրոնտիուս Ինտերնեշնլ» կազմակերպությունը: Այն թողարկում է մեքենաներ, որոնք աշխատում են լուսափոխակերպիչների և էլեկտրոլիզի միջոցով ստացված ջրածնային վառելիքով՝ զրո տոկոս արտանետումներով:

«Բրյուսելի գալա - մրցանակաբաշխությունը եզակի և անչափ կարևոր նշանակություն ունի Հաղթողների համար, որոնց ծրագրերի թիրախն է ռեսուրսների կառավարման բնապահպանական ու կայուն զարգացման հիմքերի ստեղծումը: Սա խրախուսանք է նաև «Էներջի Գլոբի» համար, որն իր գոյության 9 տարիների ընթացքում դարձել է աշխարհի ամենահայտնի և հեղինակավոր բնապահպանական մրցանակաբաշխությունը», - նշվում է Հանդիսավոր արարողությունից հետո թողարկված մամլո Հաղորդագրության մեջ:

Շեղուստատեսային գալայի ընթացքում ելույթներով Հանդես եկան ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարուղար Քոֆի Անանը և Եվրամիության Խորհրդի նախագահ Զանեգ Զանսան: Ելույթներ ունեցան նաև Դիոննե Ուորվիքը, Ալանիս Մորիսեթը և Զուկերոն:

«Էներջի Գլոբ» մրցանակաբաշխության վերաբերյալ Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք <http://energyglobe.com/en/> ինտերնետային կայքը: